«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ»
մագիստրոսական ծրագիր

«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» կրթական ծրագրի նպատակը բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստումն է: Ուսուցման գործընթացում շեշտադրվում է բարձրակարգ մարզիկների պատրաստության, ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ներկա վիճակը և զարգացման հեռանկարները, նրա մեթոդաբանության կատարելագործման հիմնախնդիրները, նորարարական մոտեցումները ֆիզիկական դաստիարակության և սպորտային մարզման գործընթացում, անձի ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստվածության օպտիմալացումը, առողջ ապրելակերպի ձևավորումը, հանրության աշխատանքային ներուժի ավելացումը, ֆիզկուլտուրային կրթվածության բարձրացումը, ֆիզիկական դաստիարակության համակարգի գոյություն ունեցող պատկերացումների, նրա ուղղվածությունների ու տարբերացված կառուցման անհրաժեշտության հայեցակարգային վերլուծությունը՝ կապված օնտոգենեզի տարիքային առանձնահատկությունների, անձի կյանքի ու գործունեության կոնկրետ պայմաններից, ինչպես նաև ֆիզիկական դաստիարակության պրոֆիլային ուղղությունների զուգակցման հիմնահարցեր, բնակչության տարբեր տարիքասեռային խմբերի ֆիզիկական վիճակի մոնիտորինգ: Ուսումնական պլանն ապահովում է մագիստրոսի հիմնարար ու մասնագիտական, գիտահետազոտական, գիտամանկավարժական պատրաստվածությունը, կրթության կառավարման դասընթացները, գիտական հետազոտությունները:

«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» կրթական ծրագիրը նախատեսում է իրականացնել՝ ուսումնադաստիարակչական, խորհրդատվական, գիտամեթոդական, ղեկավարման, կազմակերպչական գործառույթներ: Տվյալ մասնագետը կարող է աշխատել հանրակրթական դպրոցում՝ «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ուսուցիչ, նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ ֆիզիկական դաստիարակության դասախոս, բուհերի համապատասխան ամբիոններում՝ դասախոս, մարզադպրոցներում՝ մարզիչ (ըստ մասնագիտացման), գիտահետազոտական հաստատություններում՝ գիտաշխատող, ազգային կրթական հաստատությունների աշխատակից, կրթական հաստատությունների համայնքային և պետական կառավարման մարմիններում՝ մասնագետ, միջազգային գիտական և կրթական ծրագրերի համակարգող, կրթության համակարգում և մարզական կազմակերպությունների ղեկավար պաշտոններում: